Գազը կամ Ղարաբաղը

Երկուշաբթի «Գազպրոմի» ղեկավար Ալեքսեյ Միլլերը Բաքու կատարած այցի ընթացքում հայտնել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին, որ ընկերությունը պատրաստ է երկարաժամկետ պայմանագիր կնքել ադրբեջանական գազը շուկայական գներով գնելու վերաբերյալ: Այս առաջարկն այնքան տնտեսական չէ, որքան քաղաքական. Ռուսաստանն ամեն բան անում է, որպեսզի թույլ չտա ադրբեջանական գազի արտահոսք դեպի Եւրոպա: Պաշտոնական Բաքուն չի շտապում պատասխանել առաջարկին: Ըստ «Նեզավիսիմայա գազետայի» վերլուծաբանների, ադրբեջանական կողմը դրական պատասխան կտա, եթե Ռուսաստանը դադարեցնի «սատարել» Հայաստանին՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հարցում: Ադրբեջանական ՁԼՄ-ները փորձում են ցույց տալ, որ սրանով ղարաբաղյան հիմնախնդիրը կարելի է լուծված համարել հօգուտ իրենց, սակայն վերլուծաբանները վստահ են, որ հանուն գազի Ռուսաստանը չի զրկի իրեն տարածաշրջանի միակ հենակետից: